ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀՄՆ-ՄԱԱՀՔ-17/17»

ք. Երևան «21» 07 2017 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էջ մեդիա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Մ Ծատուրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրականության հրատարակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Պահանջել կատարելու մակետի (ազդօրինակի) հաստատման փուլում որոշակի հիմնավորված փոփոխություններ ձևավորման աշխատանքում՝

բ) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը՝ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին.

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5 5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Մինչև պայմանագրի կնքումը կարգավորել և Պատվիրատուին ներկայացնել գրքի հրատարակման հետ կապված հեղինակային իրավունքի տրամադրումը հաստատող հիմքերը. (պայմանագիր կամ նամակագրություն հեղինակի և թարգմանչի հետ):

2.4.3. Գրքի հանրայնացմանն ուղղված բոլոր միջոցառումներում (շնորհանդես, հոբելյանական երեկո, մամուլի ասուլիս,մամուլի հաղորդագրություն և այլն) պարտադիր հրապարակել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորված լինելու և պետական պատվերով հրատարակված լինելու հանգամանքը:

2.4.4. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին հաջորդող 3 տարիների ընթացքում պատվիրատուի կողմից հավելյալ տպագրություն պատվիրելու դեպքում այն իրականացնել միայն տպագրական աշխատանքի համար պահանջվող արժեքով՝ բացառելով հրատարակչական մասը.

2.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը :

2.4.6 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _____ օրինակ (հավելված N 3):

3.1.1 Աշխատանքի փուլը Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում՝ Պատվիրատուին դրանից ոչ պակաս, քան 5 (հինգ) աշխատանքային օր առաջ ուղարկելով հրատարակության մակետը (ները) և կատարված Աշխատանքի

փոքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 5 (հինգ) օրինակ (Հավելված N 3) և Աշխատանքի փոքի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1)՝

3.1.2 Աշխատանքն ամբողջությամբ Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված վերջին ժամկետում՝ Պատվիրատուին ներկայացնելով տպագրված հրատարակության օրինակը (ները) և կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 5 (հինգ) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

Ընդունմանը ներկայացվող Աշխատանքը համատեղ զննվում է Պատվիրատուի և Կատարողի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում և այն ընդունելու դեպքում Կատարողը իր միջոցներով Աշխատանքը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղափոխում և հանձնման-ընդունման արձանագրությամբ փոխանցում է «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ին Աշխատանքը «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ին փոխանցելու հանձնման-ընդունման արձանագրության օրինակը ստանալուց հետո Պատվիրատուի ներկայացուցիչը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է փոխանցում Աշխատանքի հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 (հինգ) օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 2 755 000 (երկու միլիոն յոթ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից

իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները, ընդ որում՝

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնի 60 %-ը՝ 1 653 000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն

իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան՝ **2017 թ. դեկտեմբերի 20-ը:**

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կամ դրա մի մասի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի՝ ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[1]:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է.

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա. Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7, Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 16. էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«Էջ մեդիա» ՍՊԸ
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3	Հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան
Կառավարական տուն 2,	Հանրապետության 1/3.բն 11
Հեռ.՝ 58-51-96, 58-51-78	Հեռ.՝ 077 94 30 68
ՎՀՀ 02500054, հ/հ 900011012862	ՎՀՀ 03543559, հ/հ N 1510041863920100
Ֆինանսների նախարարության աշխատակազմի	«Արարատբանկ» բանկ ԲԲԸ
գանձապետական վարչությունում	
Ս. Մուրադյան	Մ. Ծատուրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«21» 07 » 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/17» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի անվանումը՝ Լև Վագներ «Այվազովսկու կյանքը»

1-ին չափաբաժին

NN	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	**2017 թվականը** հոբելյանական է Այվազովսկու համար: Լրանում է նրա ծննդյան 200 տարին: Այս գիրքը վերախմբագրված վերահրատարակություն է: Այն պատմում է աշխարհահռչակ հայ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու կյանքի հետաքրքիր մանրամասները:
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60 x 84 1/16 Միջուկի չափը՝ 20 x 13 սմ (+ - 1 սմ) Ծավալը՝ 16 տպագր. մամուլ (256 էջ) (առնվազն) Տպաքանակը՝ 400 օրինակ **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 70 գ/ք.մ Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը՝ 96%) Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 10-12 Միջտողային հեռավորությունը՝ 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Parmani Շապիկը՝ 300 գրամ կավճապատ Գույների քանակը՝ 1+1 Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը /ազդօրինակը/ 16.0 տպագրական մամուլ: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:

Աշխատանքի կատարման ժամկետը		
Աշխատանքի փուլը 1 մակետ (ազդօրինակ)	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	«01» նոյեմբեր, 2017թ.
Աշխատանքն ամբողջությամբ	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	«01» դեկտեմբեր, 2017 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան
փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

---------- Մ. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.՝

ԿԱՏԱՐՈՂ

«Էջ մեդիա» ՍՊԸ
Հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան
Հանրապետության 1/3,բն.11
հեռ.՝ 077 94 30 68
ՀՎՀՀ 03543559, հ/հ N 1510041863920100
«Արարատբանկ» բանկ ԲԲԸ

---------- Մ. Ծատուրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի անվանումը՝ Լեոնիդ Ենգիբարյան «Նովելներ» (ռուսերենից)

2-րդ չափաբաժին

NN	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	Լեոնիդ Ենգիբարյանը հանրությանը հայտնի է որպես կրկեսի դերասան , սակայն մի առանձին գեղարվեստական արժեք ունեն նրա գեղարվեստական պատառիկները՝ նովելները: Ահա այս ժողովածուն ներառում է տարբեր տարիների ցաքուցրիվ հրատարակված նրա նովելները:
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60 x 84 1/16 Միջուկի չափսը՝ 20 x 13 սմ (+ - 1 սմ) Ծավալը՝ 8 տպագր. մամուլ (128 էջ) (առնվազն) Տպաքանակը՝ 300 օրինակ **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 70 գ/ք.մ Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը՝ 96%) Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 10-12 Միջտողային հեռավորությունը՝ 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Parmani Շապիկը՝ 300 գրամ կավճապատ Գույների քանակը՝ 1+1 Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը /ազդօրինակը/ 8.0 տպագրական մամուլ: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:

Աշխատանքի կատարման ժամկետը		
Աշխատանքի փուլը 1 մակետ (ազդօրինակ)	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	«01» նոյեմբեր, 2017թ.
Աշխատանքն ամբողջությամբ	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	«01» դեկտեմբեր, 2017 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչությունում

_____ Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Էջ մեդիա» ՍՊԸ
Հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան Հանրապետության 1/3,բն.11
հեռ.՝ 077 94 30 68
ՀՎՀՀ 03543559, հ/հ N 15100418639201 00
«Արարատբանկ» բանկ ԲԲԸ

_____ Մ. Ծատուրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի անվանումը՝ Վազգեն Սարգսյան «Ընտրանի»

3-րդ չափաբաժին

NN	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	Վազգեն Սարգսյանի «Ընտրանի» ժողովածուն ներառում է արձակագիր-հրապարակախոսի ստեղծագործությունները, որոնք լույս են տեսել տարբեր տարիների մեծ ու փոքր ժողովածուներով: Այս ընտրանին թույլ կտա ամբողջական պատկերացում կազմել գրողի ստեղծագործական ժառանգության մասին:
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60 x 84 1/16 Միջուկի չափսը՝ 20 x 13 սմ (+ - 1 սմ) Ծավալը՝ 16 տպագր. մամուլ (256 էջ) (առնվազն) Տպաքանակը՝ 300 օրինակ **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 70 գ/ք.մ Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը՝ 96%) Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 10-12 Միջտողային հեռավորությունը՝ 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Parmani Շապիկը՝ 300 գրամ կավճապատ Գույների քանակը՝ 1+1 Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:

4	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը /ազդօրինակը/ 16.0 տպագրական մամուլ: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:

Աշխատանքի կատարման ժամկետը		
Աշխատանքի փուլը 1 մակետ (ազդօրինակ)	**սկիզբը**	**ավարտը**
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	**«01» նոյեմբեր, 2017թ.**
Աշխատանքն ամբողջությամբ	**սկիզբը**	**ավարտը**
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	**«01» դեկտեմբեր, 2017 թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչությունում

Ա. Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Էջ մեդիա» ՍՊԸ
Հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան Հանրապետության 1/3,բն.11
հեռ.՝ 077 94 30 68
ՀՎՀՀ 03543559, հ/հ N 1510041863920100
«Արարատբանկ» բանկ ԲԲԸ

Մ. Ծատուրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

«21» «Օգ» 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/17» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79971100/1	Լև Վագներ «Այվազովսկու կյանքը»	588000	588000	588000	980000	980000	980000	980000
2	79971100/1	Լեոնիդ Ենգիբարյան«Նովելներ» (ռուսերենից)	540000	540000	540000	900000	900000	900000	900000

3	79971100/1	Վազգեն Սարգսյան «Ընտրանի»	525000	525000	525000	875000	875000	875000	875000
Ընդամենը՝			1653000	1653000	1653000	2755000	2755000	2755000	2755000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են դրամով, իսկ պայմանագիրը կնքելիս դրամի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան
փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Էջ մեդիա» ՍՊԸ
Հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան
Հանրապետության 1/3,բն.11
հեռ.՝ 077 94 30 68
ՀՎՀՀ 03543559, հ/հ N 1510041863920100
«Արարատբանկ» բանկ ԲԲԸ

Մ. Ծատուրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

«01» «07» 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/17» ծածկագրով գնման պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ

«Էջ մեդիա» ՍՊԸ
Հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան
Հանրապետության 1/3,բն.11
հեռ.՝ 077 94 30 66
ՀՎՀՀ 03543559, հ/հ N 1510041863920100
«Արարատբանկ» բանկ ԲԲԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող 3
Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58 51 96, 58-51 78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 3.1

21.06.2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/17» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

«Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ

Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Ավանեսյան

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 18. 07. 2016 թ.

«Էջ մեդիա» ՍՊԸ-ն, այսուհետև՝ Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս տնօրեն Մ. Ծատուրյանի՝ մի կողմից, և խմբագիր Ն. Ալեքսանյանը, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան
   1.1. Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր խմբագրած Լ. Վագների և Ն. Գրիգորովիչի «Այվազովսկու կյանքը» գրքի հրատարակության իրավունքը:

2. Կողմերի պարտականությունները
   2.1. Պատվիրատուն պարտավոր է
   2.1.1. Գիրքը տպագրել ևվազագույնը 400 օրինակ տպաքանակով:
   2.1.2. Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում խմբագրումներ կատարել բնագրում:
   2.1.3. Ապահովել գրքի որակյալ հրատարակումը:
   2.2. Կատարողը պարտավոր է
   2.2.1. Լ. Վագների և Ն. Գրիգորովիչի «Այվազովսկու կյանքը» վեպը Պատվիրատուին հանձնել վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով):

3. Այլ պայմաններ
   3.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի հրատարակումը:
   3.2. Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու պարագայում վեճերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Պատվիրատու
«Էջ մեդիա» ՍՊԸ-ի տնօրեն
Մ. Ծատուրյան

Կոտայքի մարզ, ք. Աբովյան,
Հանրապետության 1/3, բն. 11

Կ. Տ.

Կատարող

Ն. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Երևան, Բակունց 2-րդ նրբանցք,
4-րդ շենք, բն. 23
անձնագիր՝ AK0631742,
տրվել է 07. 10. 2010, 005-ի կողմից

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 18. 07. 2016 թ.

«Էջ մեդիա» ՍՊԸ-ն, այսուհետև՝ Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս տնօրեն Մ. Ծատուրյանի՝ մի կողմից, և կազմող Ա. Սարգսյանը, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան
   1.1. Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կազմած Լ. Ենգիբարյանի «Նովելներ» ժողովածուի հրատարակության իրավունքը:

2. Կողմերի պարտականությունները
   2.1. Պատվիրատուն պարտավոր է
   2.1.1. Գիրքը տպագրել եվազագույնը 300 օրինակ տպաքանակով:
   2.1.2. Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում խմբագրումներ կատարել բնագրում:
   2.1.3. Ապահովել գրքի որակյալ հրատարակումը:
   2.2. Կատարողը պարտավոր է
   2.2.1. Լ. Ենգիբարյանի «Նովելներ» ժողովածուն Պատվիրատուին հանձնել վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով):

3. Այլ պայմաններ
   3.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի հրատարակումը:
   3.2. Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու պարագայում վեճերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Պատվիրատու
«Էջ մեդիա» ՍՊԸ-ի տնօրեն
Մ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Կոտայքի մարզ, ք. Աբովյան,
Հանրապետության 1/3, բն. 11

Կ. Տ.

Կատարող
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 1-ին փողոց, 3-րդ փակուղի, 3-րդ տուն,
անձնագիր՝ AH0544152,
տրվել է 06. 03. 2008, 019-ի կողմից

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 18. 07. 2016 թ.

«Էջ մեդիա» ՍՊԸ-ն, այսուհետև՝ Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս տնօրեն Մ. Ծատուրյանի՝ մի կողմից, և Վազգեն Սարգսյանի գրական ժառանգորդ Ա. Սարգսյանը, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը Պատվիրատուին է տրամադրում Վազգեն Սարգսյանի «Ընտրանի» ժողովածուի հրատարակության իրավունքը:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Պատվիրատուն պարտավոր է

2.1.1. Գիրքը տպագրել նվազագույնը 300 օրինակ տպաքանակով:

2.1.2. Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում խմբագրումներ կատարել բնագրում:

2.1.3. Ապահովել գրքի որակյալ հրատարակումը:

3. Այլ պայմաններ

3.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի հրատարակումը:

3.2. Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու պարագայում վեճերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Պատվիրատու
«Էջ մեդիա» ՍՊԸ-ի տնօրեն
Մ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Կոտայքի մարզ, ք. Աբովյան,
Հանրապետության 1/3, բն. 11
Կ. Տ.

Կատարող

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

անձնագիր՝ AN0495127
տրվել է 026-ի կողմից